ՀԵՆՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ԳԱՐԵԳԻՆ ՂԱԶԱՐՅԱՆ, ՍԻՐՎԱՐԴ ՄԱՐԳԱՐՅԱՆ, Հաղթանակներն՝ ինչպես եղել են. Ազդանշ 44, «Հայկական հանրագիտարան» հրատ., Ե., 2008, 384 էջ:

Գրախոսվող հատորը նվիրված է վերջին երկու տասնամյակների ռազմական ու քաղաքական երևելի գործիչ, ԼՂՀ պաշտպանության բանակի նախկին հրամանատար, ԼՂՀ պաշտպանության նախկին նախարար, ԼՂՀ պետական բարձրագույն պարգևի՝ «Արցախի հերոս» կոչմանն արժանացած և «Ոսկե արծիվ» շքանշանի առաջին ասպետ, գեներալ-լեյտենանտ Սամվել Բաբայանի ռազմական ու քաղաքական գործունեությանը: Խորագրում ընդգրկվել է նաև Արցախյան ազատամարտի տարիներին Ս. Բաբայանի կոդային «44» ազդանշը: Գրքի խմբագիրն է Գնել Ղլեչյանը, խմբագիր-խորհրդատուն՝ մանկավարժական գիտությունների թեկնածու Ալբերտ Բազեյանը:

Գիրքը բաղկացած է վեց մասից: Պատմական գիտությունների թեկնածու Վալերի Ղլեչյանի «Անավարտ պատմություն» ներածականում արժեվորվում է Ս. Բաբայանի գործունեությունը: Վ. Ղլեչյանը իրավացիորեն նկատում է, թե սույն հատորով «հաջողվել է ստեղծել փաստավավերագրական հավաստի մի հերոսապատում, որտեղ շրջանառության մեջ դրված նյութը շատ առումներով նորովի է լույս սփռում մեզ հայտնի և անհայտ իրադարձությունների վրա»: Նա նշում է կատարված աշխատանքի դժվարությունը, մասնավորաբար այն պատճառով, որ «Սամվել Բաբայանի առանց այն էլ բարդ կերպարը մեր հասարակությանը մշտապես փորձել են ներկայացնել ծուռ հայելու դիտանկյունից» (էջ 7):

Հատորի ծավալի մոտ կեսն է զբաղեցնում «Օմարից մինչև Արաքս» վերնագրով մասը (հեղ.՝ նախկին ԽՍՀՄ և Հայաստանի ժուռնալիստների միության անդամ Հենրիկ Խաչատրյան): Այն արտացոլում է Սամվել Բաբայանի մասնակցությունը Արցախյան պահանջատիրական շարժմանը (բանտարկությունը Շուշիում ու Բաքվում, բանտից ազատվելը՝ շնորհիվ Կարեն եղբոր իրականացրած պատանդառման), ապա՝ Բաբայանի անփոխարինելի դերակատարությունը ռազմական գործողությունների ծրագրման ու իրականացման գործում: Առանձին ենթավերնագրերով շարադրված է Կրկժանի, Շուշիի, Լաչինի, Քարվաճառի, Մարտակերտի, Աղդամի, Ֆիզուլիի, Ջաբրայիլի, Կուբաթլուի, Զանգելանի, Հորադիզի և Օմարի հերոսամարտերի պատմությունը, այնուհետև՝ Միրբաշիրի ազատագրական գործողությանը նախապատրաստվելը:

ՀՀ առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի՝ Քարվաճառի ազատագրական գործողությանը դեմ լինելու առ այսօր շրջանառվող զրույցների տեսակետից շատ կարևոր է այդ օրերին ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնակատար Վազգեն Մանուկյանի վկայությունը. «Ես նրան (նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին – Հ. Խ.) զեկուցեցի այդ օպերացիայի փոքր մասը միայն, և, ստանալով նրա համաձայնությունը, մենք արեցինք ավելին» (էջ 89): Դրանով «նոր շրջափուլի սկիզբը» նշանավորվեց «Արցախյան գոյապայքարի տարեգրության մեջ» (էջ 99): Հատկանշական է Քարվաճառի ազատագրումից հետո հայկական առաջխաղացումը կասեցնելու փորձերին Ս. Բաբայանի ընդդիմադիր կեցվածքը. «Ես ոչ մի բանաձևի կամ առաջարկի չեմ ենթարկվի: Ես համոզված եմ, որ հետագա հաղթանակները միայն կարող են ապահովել մեր ժողովրդի ամբողջական

անվտանգությունը» (էջ 98): Ահա թե ինչպես ծրագրվեց և իրականացվեց ռազմական գլխավոր հենակետի վերածված Աղդամի, ինչպես նաև արևելյան ու հարավային ուղղությունների ազատագրումը, թեպետ ՀՀ և ԼՂՀ որոշ գործիչներ Աղդամի վնասազերծման ռազմական գործողություններին դեմ են արտահայտվել: «Սամվել Բաբայանի ղեկավարությամբ, առանց Երևանի տեղեկացվածության ու մասնակցության, մշակվել է Աղդամի ռազմական հենակետերի վնասազերծման օպերատիվ պլանը» (էջ 110):

Հետաքրքիր են Միրբաշիրի գործողությունը ծրագրավորելու, բայց չիրականացնելու վերաբերյալ Հ. Խաչատրյանի տեղեկությունները. «Սամվել Բաբայանը չէր ցանկանում հրաժարվել Միրբաշիրի և հարակից բընակավայրերի ազատագրման մտքից, եթե Պաշտպանության բանակը շահեկան այս պայմաններում ապահովվեր սպառազինությամբ: Երևանից, սակայն, ստացավ մերժում: Դրան հետևեց սպառազինության մատակարարումը բացառելու մասին տեղեկությունը» (էջ 168): Առանձնապես կարևոր է Ս. Բաբայանի եզրահանգումը այս չիրականացած գործողության առթիվ. «… եթե մենք, հարգելի քաղաքագետներ, ազատագրեինք Միրբաշիրը, ապա այսօր խոսք չէր կարող լինել ո՛չ նավթուղիների, գազամուղների անցկացման տեղի, նոր երկաթուղի կառուցելու, ո՛չ էլ այսքան ձըգձգվող բանակցությունների մասին: Այս ռազմագործողությունից հետո, որի հաղթանակի վերաբերյալ կասկած չունեի, պատրաստ կլիներ Ադըրբեջանի կապիտուլյացիան» (էջ 169-170): Հետագա շարադրանքից կարելի է կռահել, որ այդ հարցում Ռուսաստանն է բացասական դեր խաղացել:

Հենրիկ Խաչատրյանն անդրադառնում է նաև ողջ ազատամարտում Ս. Բաբայանի ռազմական դոկտրինի դրույթներին. «Մենք հնարավորինս խուսափել ենք դեմ հանդիման մարտեր մղելուց և դիմել ենք մեր տակտիկային. հարվածել այն ուղղություններով, որտեղ հակառակորդը մեզ չի սպասում, մշտապես փորձել ենք զգացնել, որ եթե հակառակորդը ժամ առաջ չհեռանա իր դիրքերից, ընկնելու է շրջապատման մեջ» (էջ 41), «Ճակատային գրոհների փոխարինումը փոքրաթիվ խմբերի հարձակումներով, հակառակորդի ստորաբաժանումների և՛ թևերի, և՛ թիկունքի վրա միաժամանակյա գրոհների կենտրոնացմամբ» (էջ 108): Կամ՝ «Պատերազմը միայն ուժը և զենքը չէ, այլև միտքն ու գաղափարն է: Իսկ ավելի ճիշտ՝ պատերազմը գաղափարի ու մարտավարության բախում է» (էջ 186): Մենք կավելացնեինք՝ նաև հաղթանակ կերտելու կամքն ու ոգին:

Հատորի այս մասն ունի պատմագիտական, ռազմագիտական, դիվանագիտական ու քաղաքագիտական կարևոր նշանակություն և անշրջանցելի աղբյուր է Արցախյան ազատամարտն ուսումնասիրողների համար, քանի որ՝ 1. չափազանց հարուստ է հայ ռազմուժի կարկառուն դեմքերի, ազատամարտիկների ջոկատների, նահատակների, քաղաքական ու պետական գործիչների լուսանկարներով, որոնց մի մասը հրապարակվում է առաջին անգամ, 2. թե՛ բնագրային լեզվով (ռուսերեն) և թե՛ հայերեն թարգմանությամբ առաջին անգամ լույս են տեսել Աղդամի ազատագրումից հետո ՀՀ, ԼՂՀ և Ադրբեջանի պաշտպանության նախարարների միջև փոխանակված երեք փաստաթղթերը՝ զինադադար հաստատելու փորձերի վերաբերյալ, նույն նպատակով՝ 1994 թ. փետրվարի 18-ի եռակողմ արձանագրության հայերեն թարգմանությունը, ինչպես նաև 1994 թ. զինադադարին առնչվող ևս երեք փաստաթղթեր: Գրքի հերոսի հեղինակած՝ ռազմական գործողությունների 19 քարտեզները՝ գունավոր տպագրությամբ, լուրջ արժեք ունեն ոչ միայն Արցախյան ազատամարտի, այլև առհասարակ հայ ռազմարվեստի պատմության ուսումնասիրման համար:

Այս բոլորին պետք է ավելացնել հեղինակի՝ Հ. Խաչատրյանի անպաճույճ, պարզ ոճն ու մանավանդ անաչառ վերաբերմունքը պատմական փաստերի և հերոսի նկատմամբ: Խաչատրյանը անկողմնակալ մոտեցումով է ներկայացրել բոլոր անցքերն ու անձանց՝ հեռու այս կամ այն զինվորական թե քաղաքական գործչին նսեմացնելու կամ անհարկի հերոսացնելու գայթակղությունից: Այս իմաստով սույն գիրքը Արցախյան ազատամարտին վերաբերող հսկայածավալ գրականության մեջ առանձնանում է որպես գիտական լրջությամբ ու բծախնդրությամբ գրված սկզբնաղբյուր: Կարելի է ասել՝ հատորի այս մասը Արցախյան ազատամարտի խտացված և տեղեկություններով հարուստ պատմությունն է:

Ճիշտ կլիներ, անշուշտ, Ս. Բաբայանի հեղինակած՝ «Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հայեցակարգը» և նրա հիմնավորումները ներկայացնել առանձին բաժնով՝ դրանք չընդգրկելով առավելաբար ռազմական գործողությունների մասին պատմող առաջին մասում: Մանրամասն չանդրադառնալով այս հայեցակարգին՝ նշենք, որ Սամվել Բաբայանի հայացքների մի մասը ոչ միայն մերժելի է, այլև տարակուսանք է հարուցում: Արցախի և հանուր հայության անվտանգության երաշխիքը հենց ի՛նքն է՝ հայությունը, մասնավորաբար՝ նրա զինված ուժերը և ոչ թե անդեմ Եվրոպական միությունը, որի մանդատի տակ մտնել է առաջարկում Բաբայանը, և որի «ընդհանուր հովանու ներքո» «ԼՂ-ի ժողովուրդն իր անվտանգությունը» իբր «ստիպված է փնտրելու»: Տարօրինակ է, նաև, որ այսպես արտահայտվող անձը 2006 թ. հունվարին հրապարակված մի հարցազրույցում հայտնում է. «Ո՞վ է ասում, որ մի գեղեցիկ օր էլ Եվրամիությունը չի փլուզվի» (էջ 356): Ս. Բաբայանը չգիտե՞, թե Առաջին հանրապետության ամերիկյան մանդատի ծրագիրը ինչպիսի ողբերգությամբ ավարտվեց հայության համար: Մի՞թե ազատամարտում հաղթանակած բանակի հրամանատարը և Շուշիի ազատագրման առանցքային դեմքերից մեկը պետք է խոսի ադրբեջանցի տեղահանվածների վերադարձի, «ԼՂ բնակչության բազմաէթնիկության (խառնաբնակության) վերականգնման» և թշնամուն ազատագրված տարածքներ զիջելու հնարավորության մասին՝ այս շարքից հիմնովին բացառելով հանդերձ «Քաշաթաղի և Նոր Շահումյանի (Լաչինի և Քելբաջարի) տարածքները»:

«Պետականաշինության բավիղներում» է վերնագրված Գարեգին Ղազարյանի հեղինակած՝ երկրորդ մասը: Այստեղ ներկայացվում է Սամվել Բաբայանի գործունեությունը զինադադարից հետո. բանակաշինություն՝ ԼՂՀ պաշտպանության նախարարի և ԼՂՀ ՊԲ հրամանատարի պաշտոններում, այս պաշտոններից կամավոր հրաժարում, ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի դեմ «մահափորձի կազմակերպման» մեղադրանք, ձերբակալություն, բռնադատություն և բանտարկություն, ազատության վերադարձ, «Դաշինք» կուսակցության ստեղծում և վերջինիս միաձուլում Հայաստանի ռամկավար ազատական կուսակցությանը: Գ. Ղազարյանը հիմնովին մերժում է այն տեսակետը, թե Սամվել Բաբայանը Արցախի բռնապետն է եղել: Հեղինակը սա համարում է սադրանք ազգային հերոսի նկատմամբ և հիմք՝ նրան քաղաքական առանցքային դերակատարումից զրկելու համար: Ընդհակառակը, Ղազարյանը փորձում է համոզել ընթերցողին, որ Ս. Բաբայանը, տիրապետելով հանդերձ իշխանական հզոր լծակների, կամովին է հրաժարվել զբաղեցրած պաշտոններից՝ հանուն քաղաքացիական պատերազմի կանխարգելման և ԼՂՀ պետականության կայացման ու ամրապնդման: Այս մասում հիմնավորված է Ս. Բաբայանի խոշոր ներդրումը հատկապես ԼՂՀ ՊԲ կայացման գործում: Հեղինակի համաձայն, Ս. Բաբայանն է առաջարկել և վճռորոշ դեր ունեցել ԼՂՀ նախագահ

ընտրելու Ռոբերտ Քոչարյանին (երկու անգամ), իսկ այնուհետև՝ Արկադի Ղուկասյանին:

Այս մասում ևս կան պատմական մեծարժեք փաստաթղթեր, ինչպես Սամվել Բաբայանի՝ ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանին 1998 թ. մայիսի 26-ին ուղղած հրաժարականի դիմումը, որտեղ արտահայտված են նամակագրի ու հասցեատիրոջ և այլոց միջև եղած խոր տարակարծությունները: Բաբայանը գրում է, որ իր գործունեության ընթացքում, «ցավոք», «միանգամից 4 հակառակորդների» է դիմակայել. «ա) թուրքը, բ) ԼՂՀ իշխանությունները, գ) ՀՀ իշխանությունները, դ) ՀՀ պաշտպանության նախարարությունը: Թեև սկզբունքորեն պիտի պայքարեի միայն մեկ՝ թվում էր՝ մնացյալ երեքի համար էլ ընդհանուր թշնամու դեմ» (էջ 222): Նամակի ավարտին Բաբայանը ուշագրավ մի հանգամանք է ընդգծել. «…այստեղ՝ Արցախում, մասնավորապես բանակի շարքերում, վաղուց արդեն վերացված է «ղարաբաղցի»-«հայաստանցի» չարաբաստիկ տարբերակումը: …Փոխարենը կփափագեի միայն, որ Մայր Հայաստանում, Ձեր գործունեության շնորհիվ, արմատախիլ արվեր «ղարաբաղցի»-«հայաստանցի» իրոք համակործանարար հակադրումը»9 (էջ 227): Ի վերջո կայացած փոխհամաձայնությամբ՝ ԼՂՀ-ի վարչամեքենայում տարածված բացասական երևույթները վերացնելու համար ԼՂՀ վարչապետ է նշանակվում Բաբայանի համախոհ Ժիրայր Պողոսյանը, իսկ պաշտպանության նախարար Ս. Բաբայանն «իր լիազորություններով հնարավորություն էր ստանալու նպաստել բարեփոխումների ծրագրերի մշակմանը և իրագործմանը» (էջ 228): Սա նշանակում էր, որ ԼՂՀ նոր նախագահ Արկադի Ղուկասյանի դիրքերն է՛լ ավելի էին թուլանալու: Այս, ինչպես նաև բարեփոխումների ընթացքին անձնական, այլ ոչ պետական շահերն առաջադասող բյուրոկրատական ապարատի և հատկապես ՀՀ իշխանությունների կողմից թևարկվող՝ ԼՂՀ նախագահի հակազդեցության պատճառներով, ըստ հեղինակի, սրվեցին Բաբայան-Ղուկասյան հակասությունները, որոնք անդրադարձան Ղուկասյան-Պողոսյան հարաբերությունների վրա: Սրա բնական հետևանքը եղան նախագահական հրամանագրերով Պողոսյանի պաշտոնազրկումը և «զուտ ընկերական փոխհարաբերությունների ենթահողի վրա» Անուշավան Դանիելյանի՝ վարչապետ նշանակումը: Հակադրությունն այսպիսով է՛լ ավելի սրվեց: Հաջորդեց 1999 թ. հոկտեմբերի 27-ի սպանդը ՀՀ Ազգային ժողովում: «Մինչև (ԼՂՀ. - Յ.Գ.) Ազգային ժողովի 2000 թվականի ընտրությունները հաշվված ամիսներ էին մնում: Հրամանատարի հաղթանակն ընտրապայքարում կասկած չէր հարուցում նույնիսկ նախագահական ճամբարում»,- գրում է Գ. Ղազարյանը (էջ 242): ՀՀ և ԼՂՀ ներքին քաղաքական գերշիկացած այս մթնոլորտում էլ տեղի է ունենում Ա. Ղուկասյանի դեմ մահափորձը: Հետևում են Սամվել և Կարեն Բաբայանների ու մի խումբ համախոհների ձերբակալությունը, ծեծ ու ջարդը և կեղծ ցուցմունքների կորզումը: Գ. Ղազարյանը մի կարևոր դիտարկում է հանձնում թղթին. «Ուշագրավն այն է, որ ԼՂՀ դատավորներից շատերը հրաժարվել են Սամվել Բաբայանին և նրա կողմնակիցներին դատելուց՝ քաջ գիտակցելով, որ վերջում քավության նոխազներ են դառնալու» (էջ 291): Այսպիսով, Շուշիի և Բաքվի ադրբեջանական բանտերում կես տարի խոշտանգումներ «ճաշակած», Շուշիի ազատագրական մարտերում կարևոր դեր ունեցած հրամանատարը 4,5 տարի տառապում է իր իսկ ազատագրած քաղաքի արդեն հայկական բանտում: Նա ազատվում է Ա. Ղուկասյանի «ներման» հրամանագրով՝ առանց, սակայն, ներում խնդրելու և առանց դրա համար մեղսաբաժին ունենալու:

Հատորի՝ «Հարցազրույցների ընտրանի» վերնագրված երրորդ հիմնական մասը կազմել է Սիրվարդ Մարգարյանը: Այստեղ արտատպվել են 1993 թ. հոկտեմբեր – 2007 թ. նոյեմբերի 5 ժամանակահատվածում Սամվել Բաբայանի հետ եղած հարցազրույցները (ամենածավալուն հարցազրույցը տպագրվում է առաջին անգամ), որոնք առավելաբար վերաբերում են ԼՂՀ ներքաղաքական խնդիրներին, ԼՂՀ Պաշտպանության բանակի հարցերին, Արցախյան հակամարտության կարգավորման հոլովույթին և բովանդակում են մի շարք հատկանշական մտքեր և ուղենշումներ:

Համոզված ենք, որ սույն գիրքը իրոք կարող է «օգտակար լինել ապագա գրողների, պատմաբանների, ռազմագետների, քաղաքագետների, հանրության լայն շերտերի համար՝ ամբողջացնելու, վերարժևորելու հայ ժողովրդի անկրկնելի այս դյուցազնամարտը և նմանապես նրա հերոսների մարտական ուղիները» (էջ 382):

ՅԱԶԸՃՅԱՆ Գ. Գ.
Պատմական գիտությունների թեկնածու